թէ ոչ միայն է այր անօրէն և չարագործ, այլ և առհասարակ կոչէին զնա Մ՝ՈՒՐՆ՝, այսինքն ուրացող, եւ 'ի քննութեան պահու յայտնի եղեւ նենգութիւն եւ դաւաճանութիւն նորին, զի զիրաւունս և զողորմութիւնս նուիրեալս յուխտաւորաց, յանուն վանաց Ս. Յակոբայ, վատնեալ ոչնչացոյց 'ի կամս իւր, և 'ի ժամանակի փոխանորդութեան իւրոյ յաւել նաեւ պարտս 'ի վերայ Աթոռոյն, եւ 'ի պահու քննութեան հաշուոյ նորին, պարտաւորեալ գտաւ 5500 դահեկան, որոյ վասն միաբանք վանաց ընկեցին զայն 'ի փոխանորդութենէ օրինօք դատարանի, և 'ի տեղի նորա եդին զԹէոդորոս վարդապետ. ՌՃՃԳ (1711)։ Յետ այնորիկ՝ արք երեւելիք, որք ձեռնարկեալ էին 'ի գիրն յայն 'ի ժամանակին յայնմիկ, պատմեցին զամենայն եղեալսն՝ որք ականատես իսկ էին չարութեան նորին։ Իբրեւ եհաս այս լուր 'ի վանս Սրբոյն Յակոբայ, դիմեցին անդր Յովհաննէս վարդապետ Վէքիլ և այլք 'ի միաբանաց, և բողոք բարձեալ դանկատէին զանիրաւութենէ բանտարկեալ Յովհաննիսի, և կոչէին զնա այր անօրէն և ժանտ, յայտ արարեալ յատենի անդ զամենայն գործս նորա. ապա յաւելին ասել՝ թէ չունիմք հաւատարմութիւն 'ի վերայ նորա, զի նա ուրացութեամբ և անկրօնութեամբ իւրով հռչակաւոր է 'ի մէջ քաղաքիս, որոյ վասն արքունի հրամանաւ բարձաւ աստի՝ և աքսորեցաւ, և ցարդ բանտարկեալ կայ 'ի կղզւոջն. լուեալ զայս ամենայն դատաւորն դրեալ աղդ արար 'ի Դուռն, ՌՃԶ (1714)։

Եւ 'ի նմին ժամանակի Թադաւորն էր յԱդրիանուպօլիս, գնացին մեծամեծք Հայոց անդր՝ կոչեցին և զԿեսարացի Մելիտոնն, որ երեւելի էր յայնմ ժամանակի 'ի Դուռն. զի առցեն հաւանութիւն վասն նորոգ Պատրիարքաց՝ և հրովարտակ։ Տարան և զՅովհաննէս վարդապետ անդր՝ և հանդերձ առաջնորդաւ տեղւոյն, որ էր Աբրահամ վարդապետ Ծերունի. ծախեցին բազում ինչ՝ և մատուցին դիր աղաչանաց առ Թադաւորն, և նա խոստացաւ կատարել զինդիրս նոցա, եւ ինքեանք դարձան յետս։ Իսկ Արքայ հրամայեաց յակնարկել յարձանագիրս Կայսերական դիւանին՝ և գտաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի